

ԿԻՆԵԶԻՈԼՈԳԻԱՅԻ ԱՍԲԻՈՆ

ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀԵՌԱԿԱ

ԱՌԱՐԿԱ	ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԿԻՆԵԶԻՈԹԵՐԱՊԻԱ
ՖԱԿՈՒՆՏԵՏ	ՄԱՐԶԱԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	ԿԻՆԵԶԻՈԼՈԳԻԱ
ԿՈՒՐՍ	III

ԾՐԱԳԻՐԸ ԿԱԶՄԵԼ Է
ԴՈՑԵՆՏ՝ Տ. Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

ԾՐԱԳԻՐԸ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ Է ԱՐԺԱՆԱՑԵԼ ԿԻՆԵԶԻՈԼՈԳԻԱՅԻ
ԱՍԲԻՈՆԻ ՆԻՍՏՈՒՄ

ԱՐՁ. N 2014թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ
ԱՐՁ. N

Բ Ա Յ Ա Տ Ր Ա Գ Ի Ր

Այս բաժնին հատկացվում է ուսումնական ժամերի մեծ մասը, քանի որ վնասվածքները և վիրաբուժական հիվանդությունները բավականին հաճախ են հանդիպում խաղաղ պայմաններում, այնպես էլ պատերազմի ժամանակ: Վնասվածքների և վիրաբուժական հիվանդությունների ժամանակ ֆիզիկական վարժությունները մեծ դեր են խաղում բուժման գործընթացում, վերականգման շրջանում, հանդիսանում են նաև բարդությունների պրոֆիլակտիկ միջոց: Ուսումնական գործընթացի ժամանակ անհրաժեշտ է հասնել նրան, որ ուսանողները հստակ հասկանան ֆիզիկական վարժությունների բուժական ազդեցության մեխանիզմը վնասվածքների և վիրաբուժական հիվանդությունների ժամանակ, ճիշտ ընտրեն ֆիզիկական վարժությունները և կազմեն վարժությունների անհրաժեշտ համալիրը:

Այս բաժնի դասավանդման ընթացքում հատուկ ուշադրություն պետք է դարձնել մարզիկների վնասվածքներին և նրանց վերականգման շրջանին ֆիզիկական վարժությունների միջոցով:

Գործնական պարապմունքների ժամանակ ուսանողները ծանոթանում են խնդիրների հետ, դիտում են պարապմունքները և դասախոսների հետ մասնակցում են պարապմունքի քննարկմանը: Այդ պարապմունքները եզրափակվում են ուսանողներին ինքնուրույն աշխատանք հանձնարարելով հետագա գործնական պարապմունքները անցկացնելու համար:

Առարկան ուսանողները անցնում են հինգերորդ կիսամյակում: Կիսամյակի ընթացքում ուսանողները հանձնում են մեկ ռեֆերատ, երկու միջանկյալ և վերջնական քննություն: Առարկայի համար տրվում է 4 կրեդիտ:

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԸՍՏ ԹԵՄԱՆԵՐԻ ԵՎ
ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԵՐԻ**

Դասախոսություն – 10
Գործնական – 10
Արտալսարանային – 100
Անհատական - 12

№	ԹԵՄԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Դասախոսություն	Գործնական
1.	Վնասվածքային հիվանդություն: Կոտրվածքների դեպքում կինեզիոթերապիայի մեթոդիկան	2	
2.	Փափուկ հյուսվածքների վնասվածքների կինեզիոթերապիան		2
3.	Կինեզիոթերապիան այրվածքների և ցրտահարությունների դեպքում	2	
4.	Ուսագոտու ոսկրերի կոտրվածքների կինեզիոթերապիան		2
5.	Վերին վերջույթի վնասվածքների կինեզիոթերապիան	2	
6.	Կոնքոսկրերի կոտրվածքներից և անդամահատությունից հետո կիրառվող կինեզիոթերապիան		2
7.	Հոդերի վնասվածքների և հիվանդությունների կինեզիոթերապիան		2
8.	Ստորին վերջույթի վնասվածքների կինեզիոթերապիան	2	2

9.	Որովայնի խոռոչի և կրծքավանդակի օրգանների վնասվածքներից հետո և վիրահատությունների դեպքում կիրառվող կինեզիոթերապիան	2	
ԸՆԴԱՄԵՆԸ		10	10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԸ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ)

Սակարդակ	Գիտելիքներ	Կարողություններ	Հմտություններ
1	2	3	4
Բակալավր	Վնասվածքաբանությանը առնչվող մասնագիտական տեսական և գործնական խոր գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են մասնագիտական ոլորտում իրազեկվածության համար Վնասվածքաբանություն առարկան, խնդիրները, նպատակները, առարկայի դերը բժշկական և սպորտային պրակտիկայում, տարբեր վնասվածքներից հետո նշանակվող կինեզիոթերապիան, վերականգնողական թերապիայի տեսակները:	Անհատական կինեզիոթերապիայի ծրագրի պլանավորում: Վերականգնողական թերապիայի մեթոդների ճշգրիտ ընտրություն, հաշվի առնելով անհատական առանձնահատկությունները, իսկ մարզիկների հետ աշխատելիս համապատասխան վերականգնողական միջոցառումների և ժամկետների ընտրություն, մարզումների վերսկսման չափանիշների գնահատում:	Հետվնասվածքային ֆիզիկական ռեաբիլիտացիայում կիրառվող հիվանդությունների վերականգնողական ծրագրում ակտիվ և պասսիվ կինեզիոթերապիայի մեթոդների կիրառում: Տարբեր վնասվածքների դեպքում կիրառվող կինեզիոթերապիայի մեթոդների տիրապետում:

ՏԵՍԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. ՎՆԱՍՎԱԾՔԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Հասկացություն վնասվածքի և վնասվածքային հիվանդության մասին: Բուժման հիմնական մեթոդները: Ֆիզիկական վարժությունների բուժական ազդեցության մեխանիզմները վնասվածքային հիվանդության դեպքում: Համալիր բուժման սկզբունքները:

2. ՓԱՓՈՒԿ ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԿԻՆԵԶԻՈԹԵՐԱՊԻԱՆ

Փափուկ հյուսվածքների վնասվածքների տեսակները և ձևերը: Առաջացման պատճառները: Համալիր բուժման մեթոդիկան:

3. ԱՅՐՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՑՐՏԱՀԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԻՆԵԶԻՈԹԵՐԱՊԻԱՆ

Հիմնական կլինիկական նշանները: Ժամանակակից բուժման մեթոդիկան: Ֆիզիկական վարժությունների բուժական ազդեցության մեխանիզմները: Բուժման առանձնահատկությունները:

4. ՈՒՍԱԳՈՏՈՒ ԿՈՏՐՎԱԾՔՆԵՐԻ ԿԻՆԵԶԻՈԹԵՐԱՊԻԱՆ

Ոսկրային վնասվածքներ: Փակ և բաց կոտրվածքներ: Կոտրվածքների կլինիկական նշանները: Անրակի կոտրվածքներ, անրակ ակրոմիոնային հոդակցման պատռվածք: Թիակի կոտրվածքներ: Այս կոտրվածքների կինեզիոթերապիան: Ուսային հոդի հոդախախտի կինեզիոթերապիան:

5. ՎԵՐԻՆ ՎԵՐՁՈՒՅԹԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԿԻՆԵԶԻՈԹԵՐԱՊԻԱՆ

Բազկի և նախաբազկի ոսկրերի կոտրվածքներ: Արմնկային հոդի վնասվածքներ և նրանց կինեզիոթերապիան: Դաստակային հոդախախտի և կոտրվածքների կինեզիոթերապիան: Դաստակի ջլերի վնասվածքի կինեզիոթերապիան:

6. ԿՈՆՔՈՍԿՐԻ ԿՈՏՐՎԱԾՔՆԵՐԻՑ և ԱՆԴԱՄԱՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ ԿԻՐԱՌՎՈՂ ԿԻՆԵԶԻՈԹԵՐԱՊԻԱՆ

Կոնքի կոտրվածքների տեսակները: Նրանց կինեզիոթերապիայի առանձնահատկությունները: Հասկացություն անդամահատության մասին: Անդամահատության ցուցումները: Ֆիզիկական վարժությունների դերը և խնդիրները բուժման տարբեր շրջաններում: Բուժման մեթոդիկայի հիմունքները:

7. ՀՈՂԵՐԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՆԵԶԻՈԹԵՐԱՊԻԱՆ

Հոդերի վնասվածքների տեսակները: Հոդաբորբի տեսակները: Արթրոզ: Բուժման առանձնահատկությունները: Ֆիզիկական վարժությունների բուժական ազդեցության մեխանիզմները: Հասկացություն կոնտրակտուրաների և անկլիոզի մասին:

8. ՍՏՈՐԻՆ ՎԵՐՁՈՒՅԹԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԿԻՆԵԶԻՈԹԵՐԱՊԻԱՆ

Ազդրոսկրի վզիկի կոտրվածքի կինեզիոթերապիան: Ծնկան հոդում վնասվածքների տեսակները և նրանց կինեզիոթերապիան: Մեծ ուղքի դիաֆիզար կոտրվածքների կինեզիոթերապիան: Սրունք – վեզային հոդի կապանային և ջլային ապարատի վնասվածքների կինեզիոթերապիան:

9. ԿԻՆԵԶԻՈԹԵՐԱՊԻԱՆ ՈՐՈՎԱՅՆԻ ԽՈՌՈՉԻ ՕՐԳԱՆՆԵՐԻ ՎԻՐԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Հասկացություն որովայնի խոռոչի և կրծքավանդակի օրգանների հիվանդությունների և վնասվածքների մասին, որոնք պահանջում են վիրաբուժական միջամտություն: Վիրաբուժական հիվանդությունների բուժման առանձնահատկությունները: Հասկացություն նախավիրահատական և հետվիրահատական շրջանների մասին: Ֆիզիկական վարժությունների բուժական ազդեցության մեխանիզմները և խնդիրները նախքան վիրահատելը և վիրահատելուց հետո:

**ԱԿՆԿԱԼՎՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՄՈՂՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ`**

Կգիտեման`

- Վնասվածքաբանություն առարկան, խնդիրները, նպատակները
- Առարկայի դերը բժշկական և սպորտային պրակտիկայում
- Տարբեր վնասվածքների ժամանակ կիրառվող կինեզիոթերապիան
- Հետվնասվածքային ֆիզիկական ռեաբիլիտացիայում կիրառվող կինեզիոթերապիայի մեթոդները

Կկարողանան`

- Պլանավորել տարբեր վնասվածքների ժամանակ կիրառվող կինեզիոթերապիայի ծրագրեր:
- Հետվնասվածքային վերականգնման համար կատարել կինեզիոթերապիայի ծրագրի անհատական ընտրություն:
- Կիրառել կինեզիոթերապիայի ծրագրեր կոտրվածքներից հետո վերականգնվող հիվանդների համար:
- Կիրառել ստացած գիտելիքները վերականգնողական գործընթացում:

Կտիրապետեն`

- հետվնասվածքային վերականգնման ժամանակ կիրառվող կինեզիոթերապիայի մեթոդներին
- Կինեզիոթերապևտիկ մեթոդների ընտրման և նշանակման սկզբունքներին
- Վնասվածքներ ունեցող մարզիկների ֆիզիկական ռեաբիլիտացիայի սկզբունքներին
- Վնասվածքների դեպքում կիրառվող կինեզիոթերապիայի սկզբունքներին

**ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ, ՅԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

- Կինեզիոթերապիայի առանձնահատկությունները ծնկան հոդի կապանային ապարատի վնասման դեպքում:
- Վնասվածքների առանձնահատկությունները տարբեր մարզածկերում
- Կինեզիոթերապիայի առանձնահատկությունները հոդաբորբերի և արթրոզների դեպքում:
- Կինեզիոթերապիայի առանձնահատկությունները արմնկային հոդի վնասվածքների դեպքում:

ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԱՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

1. Հասկացողություն վնասվածքային հիվանդությունների մասին:
2. Հասկացողություն կոտրվածքների մասին:
3. Ֆիզիկական վարժությունների ազդեցության մեխանիզմները վնասվածքների դեպքում:
4. Փափուկ հյուսվածքների վնասվածքների կինեզիոթերապիան:
5. Կոնտրակտուրա և անկիլոզ:
6. Փափուկ հյուսվածքների սալջարդի կինեզիոթերապիան:
7. Անրակի վնասվածքների և հոդախախտի կինեզիոթերապիան:
8. Կոտրվածքների կինեզիոթերապիան:
9. Բազուկոսկրի կոտրվածքների կինեզիոթերապիան:
10. Բազուկոսկրի դիաֆիզար կոտրվածքների կինեզիոթերապիան:
11. Ուսային հոդի հոդախախտի կինեզիոթերապիան:
12. Թիակի կոտրվածքի կինեզիոթերապիան:
13. Արմնկային հոդի վնասվածքների կինեզիոթերապիան:
14. Նախաբազուկի դիաֆիզար կոտրվածքների կինեզիոթերապիան:
15. Դաստակային հոդի կոտրվածքների և հոդախախտի կինեզիոթերապիան:
16. Դաստակի ջլերի վնասվածքի կինեզիոթերապիան:
17. Ողնաշարի պարանոցային հատվածի կոտրվածքների կինեզիոթերապիան:
18. Կրծքային և գոտկային ողերի կոտրվածքների կինեզիոթերապիան:
19. Կոնքի ոսկրերի կոտրվածքների կինեզիոթերապիան:
20. Ազդրոսկրի վզիկի կոտրվածքների կինեզիոթերապիան:
21. Ծնկան վնասվածքների կինեզիոթերապիան:
22. Ծնկան հոդի հոդախախտի կինեզիոթերապիան:
23. Մեծ ոլոքի դիաֆիզար կոտրվածքների կինեզիոթերապիան:
24. Սրունք-վեզային, ջլային և կապանային ապարատի վնասվածքների կինեզիոթերապիան:
25. Այրվածքների կինեզիոթերապիան:
26. Ցրտահարության կինեզիոթերապիան:
27. Ծայրանդամների ամպուլտացիաների կինեզիոթերապիան:
28. Կրծքավանդակի օրգանների /թոքերի և պլերայի/ վնասվածքների և հիվանդությունների կինեզիոթերապիան:
29. Կրծքավանդակի վնասվածքների կինեզիոթերապիան:
30. Որովայնի վնասվածքների կինեզիոթերապիան:
31. Եղվածքների կինեզիոթերապիան:
32. Ստամոքսի և 12-մատյա աղիքի հիվանդությունների կինեզիոթերապիան:
33. Աղիքային հիվանդությունների կինեզիոթերապիան:
34. Բազմակի և զուգակցված վնասվածքների կինեզիոթերապիան:
35. Արթրիտ /հոդաբորբ/:
36. Արթրոզ:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐ

- Ուսումնական նյութեր
- Ստուգողական թեստեր

ԱՌԱՐԿՎՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- գնահատման ձևերը՝ ռեֆերատներ, սեմինարներ

- գնահատման ընթացակարգը՝ ընթացիք չորս ստուգումների արդյունքների միջինացում
- գիտելիքների ստուգումն ըստ գիտելիքների, հաճախումների, կատարված ինքնուրույն աշխատանքների և ակտիվության
- ուսանողները VI կիսամյակի վերջում հանձնում են քննություն:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐ ԵՎ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Հիմնական

1. В1А1 Епифанов 1 Лечебная физическая культура1 Москва/ ГЭОТАРмедиа 5339
2. Попов С1Н1 0 Физическая реабилитация1 РостовнаДону/ Высшее образование 5338
3. Ծ < » շ - • • , Ë 1x 1 í Š "..... շ < , " > • շ - • • , " - • - Ñ - , • - » 3 • շ 3 < > „ < ^ • fi - ` " 3 „ < ´ • ý ^ " » " 3 , " fi > • fi < շ - • • , " fi " < » » < 3 < շ < 1 / Õ " ... ¶ > < / Ì Ò - fi • ´ • • , < © / 4 < 9 < fi 1
4. Ò • 3 " , " > < f 1x 1 / Õ " 3 " + " > < ¥ Ì Ò 1 í Ի » " 3 շ • • , < ý շ 3 < > „ " շ " • " fi • ý / Õ " ... ¶ > < / 4 < : 9 fi 1
5. Попов С1Н11 â Ñ - « , • ¶ Ú x Õ / 4 < ; ; fi 1
6. Юмашев Г1С10 Травматология и ортопедия1 Москва/Медицина 4 < < 8

Օժանդակ

1. Физическая реабилитация при травмах верхних конечностей. Пархотик И.И. 2007
2. Словарь эпонимических названий болезней и синдромов. Ортопедия и травматология. Меженина Е.П., Куценко Я.Б., Печерский А.Г., Крук З.В. 1982
3. Травматология и ортопедия. Киричек С.И. 2002
4. Травматология и ортопедия. Трубников В.Ф. 1986
5. Травматология и ортопедия. Корнилов Н.В. 2001
6. Травматология и ортопедия. Юмашев Г.С. 1990
7. Основы анатомии и прикладной кинезиологии. Род А. Хартер 1995
8. Основы кинезиологии. Энока Р.М. 1998
9. Основы интенсивной реабилитации. Травма позвоночника и спинного мозга. Книга 1. Качесов В.А. 2002

Տեղեկատվական

1. Атлас травматических вывихов. Синило М.И. 1979
2. Избранные лекции по травматологии. Поляков В.А. 1980

3. Посттравматическая нестабильность коленного сустава. *Котельников Г.П.* 1998
4. Практическая травматология. Европейские стандарты диагностики и лечения. *Анкин Л.Н., Анкин Н.Л.*
5. Физическая реабилитация. Попов С.Н. 2005
6. Физическая реабилитация детей с нарушениями функций опорно-двигательного аппарата. Гросс Н.А. 2000
7. Физическая реабилитация при травмах верхних конечностей. Пархотик И.И. 2007
8. Словарь эпонимических названий болезней и синдромов. Ортопедия и травматология. *Меженина Е.П., Куценко Я.Б., Печерский А.Г., Крук З.В.* 1982